ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 09/2024-Ա/Վ

ԱՐԹՈՒՐ ՍՈՒՔՈՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԱՆՀԱՄԱՏԵՂԵԼԻՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԽԱԽՏՄԱՆ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ք. Երևան 10 սեպտեմբերի 2024 թվական

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, կազմով՝ Մարիամ Գալստյանի, Արամայիս Փաշինյանի և Լիլիթ Ալեքսանյանի (այսուհետ՝ Հանձնաժողով), քննության առնելով Ազգային ժողովի պատգամավորի օգնական Արթուր Սուքոյանի կողմից անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտման վերաբերյալ 2024 թվականի հունիսի 13-ին հարուցված թիվ 09/2024-Ա/Վ վարույթի նյութերը,

պարզեց.

I. Նախապատմություն

1.1 Հանձնաժողովի կողմից 2024 թվականի ապրիլի 30-ին «Լրագրողի նկատմամբ բռնություն կիրառած «ախոռաննիկը» նախկին դատավորի որդի է՝ «Զարկ» ռեստորանի տերը. Զարկը, բռնությունը, փաստորեն, քոչարյանների «բրենդն» է» լրատվամիջոցի հրապարակման հիման վրա ուսումնասիրության արդյունքում արձանագրվել է հետևյալը.

1.1.1. Civic.am-ի լրագրողի նկատմամբ Ազգային ժողովում բռնություն կիրառած Արթուր Սուքոյանը աշխատում է 2023 թվականի նոյեմբերի 22-ից՝ որպես «Հայաստան» խմբակցության պատգամավոր Լևոն Քոչարյանի օգնական:

1.1.2. «Էս-Յան» ՍՊԸ-ն աշխատեցնում է Երևան քաղաքի Թումանյան փողոցի վրա տեղակայված «Զարկ» ռեստորանը, ՍՊԸ-ի 100 տոկոս բաժնետերը, ըստ պետռեգիստրի տվյալների, հենց Արթուր Սուքոյանն է:

1.2 Հայտարարագրերի ռեեստրի տվյալների համաձայն՝ Արթուր Սուքոյանը ստանձնել է Ազգային ժողովի պատգամավոր Լևոն Քոչարյանի վճարովի հիմունքներով օգնականի պաշտոնը 2023 թվականի նոյեմբերի 22-ին:

1.3 Արթուր Սուքոյանի կողմից 2024 թվականի հունվարի 5-ին ներկայացված Պաշտոնատար անձի՝ 2023 թվականի պաշտոնեական պարտականություններն ստանձնելու օրվա դրությամբ առկա գույքի և եկամուտների հայտարարագրի (այսուհետ՝ Հայտարարագիր) «Բ.7.ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ» բաժնում նշվել է, որ 2016 թվականին հիմնել է «Էս-Յան» ՍՊ ընկերությունը (այսուհետ՝ նաև Ընկերություն) (ՀՎՀՀ 02649292, հասցե ք. Երևան, Վարդանանց 16, մասնակցության չափը՝ պաշտոնը ստանձնելու պահին 100%): Միաժամանակ, Ընկերության բաժնեմասը հավատարմագրային կառավարման հանձնելու վերաբերյալ տեղեկություններ առկա չեն պետական ռեգիստրի գործակալության էլեկտրոնային համակարգում:

1.4 Արթուր Սուքոյանը Հայտարարագրի «Գ.1. Հայտարարատու պաշտոնատար անձի, նրա ընտանիքի անչափահաս անդամների և խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձանց եկամուտները» բաժնի «Գ.1.1. Հաշվետու տարվա եկամուտներ» ենթաբաժնում հայտարարագրել է աշխատանքի վարձատրություն և/կամ դրան հավասարեցված այլ վճարումներ՝ 840,500 դրամ՝ ստացված «Էս-Յան» ՍՊԸ-ի կողմից, իսկ «Բ.4. ՀԱՆՁՆՎԱԾ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԲԱՆԿԱՅԻՆ ԱՎԱՆԴՆԵՐ» բաժնի «Բ.4.1. Հանձնված փոխառություններ» ենթաբաժնում որպես փոխառություն կամ բանկային ավանդ վերջինս հայտարարագրել է 25 հազար ԱՄՆ դոլար և 10 միլիոն ՀՀ դրամ՝ պարտապան «Էս-Յան» ՍՊԸ:

1.5 Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրում առկա տվյալների համաձայն՝ 2016 թվականի մայիսի 19-ից Ընկերության 100 տոկոս բաժնեմասը պատկանում է Արթուր Սուքոյանին: Ընկերության գործադիր մարմնի ղեկավարը և իրական շահառուն (ԻՇ հայտարարագիրը՝ հաստատված 20.02.2024) ևս հանդիսանում է Արթուր Սուքոյանը:

2. 2024 թվականի հունիսի 13-ին Հանձնաժողովը կայացրել է թիվ 09/2024-Ա/Վ որոշումը՝ Ազգային ժողովի պատգամավորի օգնական Արթուր Սուքոյանի կողմից անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտման վերաբերյալ վարույթ հարուցելու մասին:

3. 2024 թվականի հունիսի 14-ին թիվ 01/1882-2024 գրությամբ անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտման վերաբերյալ վարույթ հարուցելու մասին որոշումը փոստային ծառայության միջոցով ուղարկվել է Արթուր Սուքոյանին՝ միաժամանակ առաջարկելով ներկայացնել պարզաբանում վարույթի շրջանակում քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ և դրան կցել փաստարկների հիմնավորվածությունը հավաստող նյութեր: Փոստային առաքանին Արթուր Սուքոյանը ստացել է 2024 թվականի հունիսի 17-ին:

4. Վարույթում քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ տվյալներ ստանալու նպատակով Հանձնաժողովի կողմից 2024 թվականի հունիսի 25-ին և սեպտեմբերի 6-ին կատարվել են հարցումներ Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն, Պետական եկամուտների կոմիտե, ինչպես նաև Հանձնաժողովը 2024 թվականի հուլիսի 24-ին գրավոր դիմել է «Էս-Յան» ՍՊ ընկերությանը:

II. Վարույթի մասնակցի ներկայացրած դիրքորոշում ու պարզաբանումներ

Վարույթում քննարկվող առերևույթ խախտումների վերաբերյալ 2024 թվականի հուլիսի 24-ին Հանձնաժողովում ստացված թիվ Մ-3313 գրությամբ Արթուր Սուքոյանը պատասխան-առարկություն (այսուհետ՝ Առարկություն) է ներկայացրել հետևյալ բովանդակությամբ.

«Նախևառաջ սույն թվականի մայիսի 1-ից առ հունիսի 27-ը իմ նկատմամբ կիրառված է եղել այնպիսի խափանման միջոց՝ կալանք, ապա տնային կալանք, որով պայմանավորված, հաշվի առնելով խափանման միջոցի պայմանները, զրկված եմ եղել կապի միջոցներից օգտվելու հնարավորությունից. Սրա վերաբերյալ տեղեկատվությունը Վարչական մարմինը (տվյալ դեպքում ԿԿՀ-ն), հիմք ընդունելով փոխօգնության

սկզբունքը, կարող է ստանալ համապատասխան նախաքննական մարմիններից և ՀՀ ԱՆ պրոբացիոն ծառայությունից:

Վերոգրյալով պայմանավորված միայն այսօր՝ 10.07.2024թ. ուղարկում եմ պատասխան-առարկություն՝ հայցելով զերծ մնալ միջամտող ակտ ընդունելուց:

Պատասխանի հիմքերը և հիմնավորումները

Իմ կողմից հիմնադրված «Էս-Յան» ՍՊ ընկերությունը 2023թ. սեպտեմբերի 1-ից փաստացի որևէ գործունեություն չի իրականացրել. Կազմակերպությունը զուտ դե յուրե է շարունակել գոյություն ունենալ, իսկ ես որևէ կերպ ներգրավված չեմ եղել կազմակերպության գործունեությանը, որևէ գործողություն չեմ իրականացրել կազմակերպության գործունեության կազմակերպման և իրականացման համար: Կազմակերպությունը սույն թվականի հուլիսի 8-ին կասեցվել է իմ դիմումի հիման վրա, դադարեցումը անհնար է՝ պայմանավորված վերջինիս պարտավորությունների, այդ թվում՝ դրամական պարտավորությունների առկայության փաստի ուժով: ՍՊԸ կասեցման պարագայում ակնհայտ է, որ իմ կողմից վերացվել են այն ենթադրյալ խախտումները, որոնք առկա էին, ինչով պայմանավորված Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովից հայցում եմ իմ նկատմամբ հարուցված վարույթը կարճել:»:

III. ԱԺ պատգամավորի օգնականի գործունեությանն առնչվող փեղեկություններ

Հայտարարագրերի ռեեստրի տվյալների համաձայն՝ Արթուր Սուքոյանը ստանձնել է Ազգային ժողովի պատգամավոր Լևոն Քոչարյանի վճարովի հիմունքներով օգնականի պաշտոնը 2023 թվականի նոյեմբերի 22-ին և մինչ օրս շարունակում է պաշտոնավարել:

IV. Վարույթի համար էական նշանակություն ունեցող փաստեր

1. Արթուր Սուքոյանը ստանձնել է Ազգային ժողովի պատգամավոր Լևոն Քոչարյանի վճարովի հիմունքներով օգնականի պաշտոնը 2023 թվականի նոյեմբերի 22-ին և շարունակում է պաշտոնավարել մինչ օրս:

2. 2016 թվականի մայիսի 19-ից Ընկերության 100 տոկոս բաժնեմասը պատկանում է Արթուր Սուքոյանին: Ընկերության գործադիր մարմնի ղեկավարը և իրական շահառուն (ԻՇ հայտարարագիրը՝ հաստատված 20.02.2024) ևս հանդիսանում է Արթուր Սուքոյանը:

3. Հանձնաժողովի 2024 թվականի հունիսի 25-ի թիվ 01/1960-2024 գրությանն ի պատասխան ***Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունից*** 2024 թվականի հունիսի 26-ի թիվ /25.8.1/25423-2024 գրությամբ ստացված տեղեկատվության համաձայն՝

1) Իրավաբանական անձանց պետական միասնական գրանցամատյանում (այսուհետ՝ Գրանցամատյան) 2024 թվականի հունիսի 26-ի դրությամբ առկա տեղեկությունների համաձայն՝ «ԷՍ-ՅԱՆ» ՍՊ ընկերությունը պետական գրանցում է ստացել 19.05.2016թ.-ին, կազմակերպության գրանցման համարն է՝ 286.110.910197, ՀՎՀՀ՝ 02649292: Ընկերության միակ մասնակից 100% բաժնեմասով և գործադիր մարմնի ղեկավար գրանցված է Արթուր Ալեքսեյի Սուքոյանը (ն/ք՝006069249, հասցե՝ ք. Երևան, Վարդանանց 16-28):

2) Գրանցամատյանում «ԷՍ-ՅԱՆ» ՍՊ ընկերության հավատարմագրային կառավարման հանձնելու վերաբերյալ տեղեկություններ, ինչպես նաև ընկերության պետական գրանցման արխիվային գործում համապատասխան հիմքեր առկա չեն:

4. Հանձնաժողովի 2024 թվականի հունիսի 25-ի թիվ 01/1938-2024 գրությանն ի պատասխան՝ ***ՀՀ Պետական եկամուտների կոմիտեից*** 2024 թվականի հուլիսի 3-ի թիվ 01/71-6/40849-2024 գրությամբ ստացված տեղեկատվության համաձայն՝

1) Արթուր Սուքոյանը 2023 թվականի դեկտեմբեր ամսվանից մինչև 2024 թվականի մայիս ամիսն ընկած ժամանակահատվածում ստացել է աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումներ «Էս-Յան» ՍՊ ընկերությունից:

2) «Էս-Յան» ՍՊ ընկերությունը 2024 թվականի հուլիսի 3-ի (հարցման պատասխանի ստացման) դրությամբ հանդիսանում է գործող առևտրային կազմակերպություն: 2023 թվականի նոյեմբեր ամսվանից 2024 թվականի հուլիս ամիսն ընկած ժամանակահատվածում (այսուհետ՝ նաև հաշվետու ժամանակահատված) Ընկերությունը իրացման շրջանառություն չի ապահովել:

5. Հանձնաժողովի 2024 թվականի սեպտեմբերի 3-ի թիվ 01/2808-2024 գրությանն ի պատասխան՝ ***ՀՀ Պետական եկամուտների կոմիտեից*** 2024 թվականի սեպտեմբերի 6-ի թիվ 01/71-6/56687-2024 գրությամբ ստացված տեղեկատվության համաձայն՝

1) 2023 թվականի նոյեմբեր ամսվանից մինչև 2024 թվականի սեպտեմբերի 6-ն (հարցման պատասխանի ստացման ամսաթիվ) ընկած ժամանակահատվածում Ընկերությունը հարկային պարտավորությունների մասով պետական բյուջե վճարներ չի կատարել:

2) Ընկերությունը 2024 թվականի հուլիսի 10-ից անորոշ ժամկետով դադարեցրել է գործունեությունը:

3) 2023 թվականի նոյեմբեր ամսվանից մինչև 2024 թվականի հուլիս ամիսն ընկած ժամանակահատվածում (այսուհետ՝ նաև հաշվետու ժամանակահատված) Ընկերության կողմից էլեկտրոնային եղանակով ներկայացված եկամտային հարկի և սոցիալական վճարի ամսական հաշվարկների համաձայն՝ Ընկերությունը մեկ աշխատակցի համար հաշվարկել է աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումներ (ներկայացվել են փաստացի աշխատած ժամերը՝ ըստ ամիսների): Զրոյական հաշվարկ է ներկայացվել հունիս ամսվա համար, ինչպես նաև մարտ ամսվա հաշվարկում ուղղում է կատարվել (զրոյացվել է):

6. Հանձնաժողովի 2024 թվականի հուլիսի 24-ի թիվ 01/2210-2024 հարցմանն ի պատասխան «Էս-Յան» ՍՊ ընկերության տնօրեն Արթուր Սուքոյանի կողմից 2024 թվականի օգոստոսի 9-ին Հանձնաժողով մուտքագրված Մ-3566-2024 գրությամբ ներկայացվել են Ընկերության բանկային հաշվի քաղվածքներ և իրավաբանական անձի գրանցման վկայական:

V. Անհամապատասխանության պահանջին առաջադրվող ներպետական օրենսդրական կարգավորումներ

1. «Հանրային ծառայության մասին» օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 4-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ **հանրային պաշտոնը** դասակարգվում է խմբերի՝ **պետական** և համայնքային: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պետական պաշտոնները

դասակարգվում են տեսակների՝ քաղաքական, վարչական, ինքնավար և **հայեցողական:**

2. Օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված իրավակարգավորմամբ՝ Ազգային ժողովի պատգամավորի օգնականի պաշտոնը հանդիսանում է **պետական հայեցողական պաշտոն:**

3. Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները չեն կարող զբաղեցնել ***իրենց կարգավիճակով չպայմանավորված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման այլ մարմիններում, որևէ պաշտոն՝ առևտրային կազմակերպություններում, զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, կատարել վճարովի այլ աշխատանք,*** բացի գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքից:

4. Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները պաշտոնում ***նշանակվելուց (ընտրվելուց) հետո՝*** **մեկ ամսվա ընթացքում,** պարտավոր են ապահովել սույն հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջների կատարումը:

5. Նույն հոդվածի 6-րդ և 7-րդ մասերով սահմանվում են առևտրային կազմակերպությունում պաշտոն զբաղեցնելու և ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու հասկացությունները:

6. «Հանրային ծառայության մասին» օրենքի իմաստով առևտրային կազմակերպությունում (բացառությամբ Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային պայմանագրերի հիման վրա ստեղծված կազմակերպությունների) պաշտոն զբաղեցնելու ներքո հասկացվում է՝

1) առևտրային կազմակերպության **կառավարման մարմնում ընդգրկված լինելը**.

2) առևտրային կազմակերպությունում ցանկացած այլ պաշտոն զբաղեցնելը.

3) առևտրային կազմակերպության գույքի հավատարմագրային կառավարիչ լինելը.

4) սույն մասի 1-3-րդ կետերում նշված դեպքերից բացի, **որևէ այլ ձևով առևտրային կազմակերպության ներկայացուցչական, կարգադրիչ կամ կառավարման գործառույթների իրականացմանը ներգրավված լինելը**: (…):

7. Նույն օրենքի իմաստով **ձեռնարկատիրական գործունեություն է** համարվում՝ (…) **առևտրային կազմակերպության մասնակից,** բաժնետեր, փայատեր լինելը,

բացառությամբ այն դեպքի, երբ առևտրային կազմակերպության բաժնեմասը, բաժնետոմսը, փայն ամբողջությամբ **հանձնվել են հավատարմագրային կառավարման,** կամ չի գերազանցում սույն հոդվածի 8-րդ մասի 11-րդ կետում նշված թույլատրելի բաժնեմասնակցությունը:

8. Նույն հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ **հանրային պաշտոն զբաղեցնող անձինք** և հանրային ծառայողները պաշտոնի նշանակվելուց (ընտրվելուց) հետո իրավունք չունեն ձեռք բերելու առևտրային կազմակերպությունների կանոնադրական կապիտալում մասնակցություն (բաժնեմաս, բաժնետոմս, փայ): Առևտրային կազմակերպությունների կանոնադրական կապիտալում մասնակցություն (բաժնեմաս, բաժնետոմս, փայ) ունենալու կամ պաշտոնավարման ընթացքում ժառանգություն ստանալու դեպքում հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները պարտավոր են պաշտոնն ստանձնելուց կամ ժառանգությունն ընդունելուց հետո՝ **մեկ ամսվա ընթացքում, այն օրենքով սահմանված կարգով հանձնել հավատարմագրային կառավարման:**

9. «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 12.1-ին կետի (սույն իրավակարգավորումը ուժի մեջ է մտել 02.01.2023թ.-ին) համաձայն՝ իրավաբանական անձանց պետական գրանցման գրանցամատյանում գրառվում են **տեղեկություններ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության բաժնեմասը հավատարմագրային կառավարման հանձնելու վերաբերյալ:**

10. «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ ի թիվս այլ դեպքերի, Հանձնաժողովը կարող է **անհամատեղելիության պահանջների,** այլ սահմանափակումների, վարքագծի կանոնների խախտումների և իրավիճակային շահերի բախման վերաբերյալ վարույթներ հարուցել ***լրատվամիջոցների հրապարակումների հիման վրա:***

11. «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հանձնաժողովը վարույթի արդյունքում խախտման կամ դեպքի վերաբերյալ ընդունում է եզրակացություն:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վարույթի արդյունքում Հանձնաժողովն ընդունում է եզրակացություն պաշտոն զբաղեցնող անձի կողմից

անհամատեղելիության պահանջների կամ այլ սահմանափակումների խախտման առկայության կամ բացակայության մասին կամ համապատասխան պաշտոն զբաղեցնող անձի կողմից վարքագծի կանոնների խախտման առկայության կամ բացակայության մասին, իսկ իրավիճակային շահերի բախման դեպքի կապակցությամբ՝ շահերի բախման իրավիճակի առկայության կամ բացակայության մասին:

VI. Հանձնաժողովի պատճառաբանություններն ու եզրահանգումը

Ազգային ժողովի պատգամավորի օգնականի հանրային պաշտոն զբաղեցնող անձանց համար ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու, ինչպես նաև առևտրային կազմակերպությունում պաշտոն զբաղեցնելու սահմանափակումն ամրագրված է «Հանրային ծառայության մասին» օրենքով:

Անհամատեղելիության պահանջներ սահմանող իրավակարգավորումներից հետևում է, որ հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողներին ներկայացվող օրենսդրական պահանջներն ընդգրկում են տարբեր բաղադրիչներ, այն է՝ իրենց կարգավիճակով չպայմանավորված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման այլ մարմիններում, որևէ պաշտոն՝ առևտրային կազմակերպություններում զբաղեցնելու, ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու, այլ վճարովի աշխատանք կատարելու արգելքները, որոնցից յուրաքանչյուրին առնչվող իրավակարգավորումները սահմանված են «Հանրային ծառայության մասին» օրենքի 31-րդ հոդվածի առանձին դրույթներում: Մասնավորապես, ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու բաղադրիչի ներքո սահմանված օրենսդրական կարգավորումների վերլուծությունից հետևում է, որ առևտրային կազմակերպության մասնակից լինելը ձեռնարկատիրական գործունեություն չի դիտարկվում, երբ առևտրային կազմակերպության մասնակցի բաժնեմասն օրենքով սահմանված ժամկետում և կարգով ամբողջությամբ հանձնվել է հավատարմագրային կառավարման: Նման իրավակարգավորումից հետևում է, որ հանրային կամ հանրային ծառայության պաշտոն զբաղեցնելու ընթացքում **առևտրային կազմակերպության մասնակցության արգելքը բացարձակ է**:

Ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու սահմանափակումը, մասնավորապես, չի արգելում հանրային պաշտոն զբաղեցնող անձանց որպես սեփականություն ունենալ բաժնեմաս առևտրային կազմակերպությունում, բացառությամբ «Հանրային ծառայության մասին» օրենքի (2023 թվականի հունվարի 2-ին ուժի մեջ մտած ՀՕ 540-Ն օրենք) 31-րդ հոդվածի 10-րդ մասով սահմանված դեպքերի, որով մասնավորապես սահմանվում է, որ

- հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները պաշտոնի նշանակվելուց (ընտրվելուց) հետո իրավունք չունեն ձեռք բերելու առևտրային կազմակերպությունների կանոնադրական կապիտալում մասնակցություն (բաժնեմաս, բաժնետոմս, փայ):

- առևտրային կազմակերպությունների կանոնադրական կապիտալում մասնակցություն (բաժնեմաս, բաժնետոմս, փայ) ունենալու կամ պաշտոնավարման ընթացքում ժառանգություն ստանալու դեպքում հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները պարտավոր են պաշտոնն ստանձնելուց կամ ժառանգությունն ընդունելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում, այն օրենքով սահմանված կարգով հանձնել հավատարմագրային կառավարման:

Հանրային կամ հանրային ծառայության պաշտոն զբաղեցնելու ընթացքում առևտրային կազմակերպության մասնակցության (պաշտոն զբաղեցնելու) արգելքի ներքո ենթադրվում է, որ անձը պետք է զերծ մնա հնարավոր այնպիսի բոլոր գործողություններից, որոնց շրջանակում կարող է ձևավորվել այնպիսի վարքագիծ, որը կարող է որակվել որպես պետական պաշտոնին զուգահեռ անձի մասնակցության ու առևտրային կազմակերպության գործունեության նկատմամբ այլ պաշտոնում ազդեցության պահպանում՝ մասնակցություն ունենալով կամ այլ կերպ ներգրավված լինելով առևտրային կազմակերպության կողմից կայացվող որոշումներում, ներկայացուցչական, կարգադրիչ կամ կառավարման այլ գործառույթների իրականացմանը:

Միաժամանակ, նշված իրավադրույթներից հետևում է, որ օրենսդիրը չի սահմանափակում հանրային պաշտոն զբաղեցնող անձանց սեփականության իրավունքով արդեն իսկ իրենց պատկանող գույքը տնօրինելու իրավունքից, այլ տվյալ պաշտոնը զբաղեցնելու հանգամանքով պայմանավորված՝ նախատեսում է օրենքի իմաստով ձեռնարկատիրական գործունեություն համարվող առևտրային

կազմակերպությունում ունեցած բաժնեմասնակցության տնօրինման կոնկրետ եղանակ, այն է՝ պաշտոնում նշանակվելուց (ընտրվելուց) հետո՝ մեկ ամսվա ընթացքում առևտրային կազմակերպության մասնակցի բաժնեմասն (բաժնետոմս, փայ) ***ամբողջությամբ հանձնել հավատարմագրային կառավարման***՝ դրանով իսկ բացառելով կամ նվազագույնի հասցնելով հանրային պաշտոն զբաղեցնող անձանց մոտ շահերի բախման իրավիճակները: Նման կարգավորումներն որևէ կերպ չեն խաթարում անձի՝ Սահմանադրությամբ ամրագրված, սեփականության հիմնարար իրավունքը, քանի որ անձը, հանձնելով առևտրային կազմակերպությունում իր բաժնեմասը հավատարմագրային կառավարման, չի փոխանցում իր սեփականության իրավունքը հավատարմագրային կառավարչին, այլ այդ կերպ իրացնում է իր՝ սեփականատիրոջ իրավունքը:

Իրավական սահմանափակումների ներքո ենթադրվում է, որ պաշտոնավարման ողջ ժամանակահատվածում հանրային պաշտոն զբաղեցնող անձը պարտավորվում է գործունեություն իրականացնել իր պաշտոնի նկատմամբ սահմանված իրավական որոշակի սահմանափակումների շրջանակներում: Հետևաբար, նշանակվելով հանրային պաշտոնում՝ իրավունքների ու պարտականությունների հետ մեկտեղ պաշտոնատար անձը ստանձնում է նաև օրենքով սպառիչ կերպով սահմանված սահմանափակումների ներքո գործելու պարտականություն, որը հետապնդում է տվյալ պարագայում հանրային պաշտոն զբաղեցնող անձի կողմից բացառապես իր պաշտոնեական լիազորությունների և գործառույթների իրականացումն ապահովելու և ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող անձանց մուտքը պետական մարմիններ բացառելու օրինաչափ նպատակը:

Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց նկատմամբ օրենսդրությամբ սահմանված անհամատեղելիության պահանջների **նպատակը շահերի բախման հնարավոր իրավիճակների բացառումն է, ինչպես նաև հանրային պաշտոն զբաղեցնող անձանց կողմից իրենց աշխատաժամանակի, որպես հանրային ռեսուրսի, պատշաճ տնօրինման ապահովումն է:**

Տվյալ պարագայում, Արթուր Սուքոյանը 2023 թվականի նոյեմբերի 22-ից հանդիսանում է պետական հայեցողական պաշտոն զբաղեցնող անձ, որի նկատմամբ կիրառելի են «Հանրային ծառայության մասին» օրենքի 31-րդ հոդվածի կարգավորումները: Այսինքն, Արթուր Սուքոյանը պարտավոր էր պաշտոնը

ստանձնելուց հետո մեկ ամսվա ընթացքում Ընկերության՝ իրեն պատկանող բաժնեմասը, օրենքով սահմանված կարգով հանձնել հավատարմագրային կառավարման, ինչպես նաև միջոցներ ձեռնարկել Ընկերության գործադիր մարմնի ղեկավարի պաշտոնը դադարեցնելու ուղղությամբ:

Այնուամենայնիվ, Հանձնաժողովը հարկ է համարում վերոնշյալ փաստերը և դրանց վերաբերելի իրավակարգավորումները վերլուծել օրենքի **ձևական և բովանդակային տեսանկյունից:**

Սույն վարույթի շրջանակներում Հանձնաժողովն արձանագրում է, որ Օրենքի տեսանկյունից խախտվել են հանրային պաշտոն զբաղեցնող անձի նկատմամբ տարածվող անհամատեղելիության պահանջները, և դա դրսևորվել է Արթուր Սուքոյանի կողմից պաշտոն ստանձնելուց հետո Ընկերության իր բաժնեմասն օրենքով սահմանված կարգով հավատարմագրային կառավարման չհանձնելու (ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու) և առևտրային կազմակերպությունում պաշտոն զբաղեցնելու արարքներով:

Հանձնաժողովը հարկ է համարում Արթուր Սուքոյանի կողմից կատարված առերևույթ խախտմանն անդրադառնալ Օրենքի՝ առևտրային կազմակերպությունում պաշտոն զբաղեցնելու և ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու արգելքի բովանդակային տեսանկյունից, ուստի նշված արարքները անհրաժեշտ է համարում դիտարկել դրա բովանդակային դրսևորումների շրջանակում՝ գնահատելով սույն գործով ձեռք բերված ապացույցները:

Սույն գործով ձեռք բերված փաստական տվյալ է այն, որ Ընկերությունը հաշվետու ժամանակահատվածում ***իրացման շրջանառություն չի ապահովել***, 2024 թվականի հուլիս ամսվանից սկսած Ընկերությունը ***ունի ժամանակավոր դադարեցվածի կարգավիճակ,*** ինչպես նաև Ընկերության կողմից ներկայացված բանկային հաշվի քաղվածքով դրամական մուտքերի/ելքերի վերաբերյալ տեղեկատվությունն արտացոլվում է մինչև 2023 թվականի նոյեմբեր ամիսը: Մեկ այլ փաստական տվյալ է այն, որ հաշվետու ժամանակահատվածում Արթուր Սուքոյանի համար Ընկերության կողմից **հաշվարկվել է աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումներ, եկամտային հարկի ամսական հաշվարկներում ներկայացվել են փաստացի աշխատած ժամերը:**

Վարույթի մասնակցի կողմից Առարկությամբ ներկայացվել է դիրքորոշում առ այն, որ Կազմակերպությունը զուտ դե յուրե շարունակել է գոյություն ունենալ, իսկ ինքը որևէ կերպ ներգրավված չի եղել կազմակերպության գործունեությանը, որևէ գործողություն չի իրականացրել կազմակերպության գործունեության կազմակերպման և իրականացման համար, ինչպես նաև իր դիմումի հիման վրա Կազմակերպության գործունեությունը սույն թվականի հուլիսի 8-ին կասեցվել է: Նշվածի կապակցությամբ Հանձնաժողովն արձանագրում է, որ սույն վարույթի շրջանակներում ձեռք բերված փաստական տվյալների համաձայն՝ թեև Ընկերության գործունեությունը հուլիսի 10-ից (վարույթի ընթացքում) ժամանակավոր դադարեցվել է, ինչպես նաև Ընկերությունը հաշվետու ժամանակահատվածում իրացման շրջանառություն չի ապահովել, այնուամենայնիվ, ՀՀ Պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության համաձայն՝ Ընկերությունը հաշվետու ժամանակահատվածում Արթուր Սուքոյանին ***վճարել է (հաշվարկել է) աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումներ*** (աշխատավարձի գծով պարտավորությունը ձևավորվել է հաշվետու ժամանակահատվածում), որպիսի պարագայում, Հանձնաժողովը գալիս է այն եզրահանգման, որ Արթուր Սուքոյանը փաստացի աշխատել է Ընկերությունում և դրա դիմաց ստացել է (հաշվարկվել է) աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումներ (հաշվարկվել է փաստացի աշխատած ժամեր):

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ (…) Վարչական մարմինները պարտավոր են անհատական մոտեցում ցուցաբերել **էապես տարբեր փաստական** հանգամանքների նկատմամբ:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե վարչական մարմինը որևէ հայեցողական լիազորություն իրականացրել է որոշակի ձևով, ապա միանման դեպքերում հետագայում ևս պարտավոր է իր այդ հայեցողական լիազորությունն իրականացնել նույն ձևով:

Նշված իրավանորմով պայմանավորված՝ Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում անդրադառնալ իր կողմից նախկինում կայացված 2023 թվականի փետրվարի 20-ի թիվ 05/2023 եզրակացությանը, որով ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու խախտմանն առնչվող գործով արձանագրել է անհամատեղելիության պահանջների խախտման բացակայություն՝ որպես

պատճառաբանություն նշելով, որ թեև առևտրային կազմակերպության գործունեության դադարեցման և (կամ) ժամանակավոր դադարեցման վերաբերյալ տվյալներ առկա չեն եղել, այնուամենայնիվ (ՀՀ Պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության համաձայն) նշված ընկերության՝ վերաբերելի ժամանակահատվածի ընթացքում փաստացի գործունեություն իրականացնելու, իրացման շրջանառության, ինչպես նաև շահույթի ստացման վերաբերյալ տվյալներ առկա չեն եղել:

Վերոնշյալի համատեքստում, Հանձնաժողովն արձանագրում է, որ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու խախտման առնչությամբ վերոնշյալ վարույթի փաստական հանգամանքները նույնական են սույն վարույթի փաստական հանգամանքների հետ, մասնավորապես՝ Արթուր Սուքոյանի բաժնեմասնակցությամբ առևտրային կազմակերպությունը հաշվետու ժամանակահատվածում իրացման շրջանառություն նույնպես չի ապահովել, շահույթի ստացման վերաբերյալ տվյալներ ևս առկա չեն, ավելին՝ սույն վարույթի ընթացքում Ընկերության գործունեությունը կասեցվել է և ունի ժամանակավոր դադարեցվածի կարգավիճակ, որպիսի պարագայում Հանձնաժողովն արձանագրում է, որ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու խախտումը կրում է ձևական բնույթ:

Ի տարբերություն նշված ձևական խախտման՝ Հանձնաժողովը հարկ է համարում առանձին անդրադառնալ Արթուր Սուքոյանի կողմից Ընկերությունում պաշտոն զբաղեցնելու առնչությամբ արձանագրված խախտմանը:

Նշված խախտման համատեքստում Հանձնաժողովն էական է համարում այն հանգամանքը, որ Ընկերությունում պաշտոն զբաղեցնելով՝ պաշտոնատար անձը հնարավորություն է ունեցել փաստացի իրականացնելու կառավարչական բնույթի գործողություններ և պետական մարմնից ստացված տեղեկատվության համաձայն՝ վարձատրվել: Հետևաբար, Արթուր Սուքոյանի կողմից իր ստանձնած պաշտոնի հետ անհամատեղելի գործունեություն փաստացի իրականացվել է:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով սահմանված, վարչարարության հիմնարար սկզբունք հանդիսացող կամայականության արգելքի համատեքստում Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում անդրադառնալ նաև իր կողմից նախորդիվ կայացված այն եզրակացություններին (2020 թվականի մարտի 6-ի թիվ 06/2019 և 2023 թվականի մարտի 27-ի թիվ 06/2022-2023), որոնցով

հաստատված փաստական հանգամանքների և սույն գործով հաստատված փաստական հանգամանքների միջև էական տարբերություն առկա է:

Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում ընդգծել այն իրողությունը, որ իր կողմից նախորդիվ կայացրած եզրակացություններում առևտրային կազմակերպություններում պաշտոն զբաղեցնելու օրենսդրական արգելք սահմանող իրավանորմի պահանջների առնչությամբ արձանագրվել է հանրային պաշտոն զբաղեցնող անձի կողմից բովանդակային խախտումների բացակայություն այն հանգամանքների հաշվառմամբ, որ վարույթի ընթացքում իրավասու մարմիններից ձեռք չեն բերվել տվյալներ, որոնցով կարող էր հաստատվել պաշտոն զբաղեցնող անձի կողմից առևտրային կազմակերպությունում իր ազդեցության պահպանման փաստը, մինչդեռ սույն գործով իրավասու մարմիններից ձեռք բերված տվյալներով հաստատված է համարվում այն հանգամանքը, որ Արթուր Սուքոյանը Ընկերությունում զբաղեցրել է տնօրենի պաշտոնը և **վերջինիս համար հաշվարկվել է աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումներ՝ ըստ փաստացի աշխատած ժամերի:** Վերոնշյալի համատեքստում Հանձնաժողովն արձանագրում է, որ սույն դեպքում թույլ է տրվել օրենքի բովանդակային խախտում:

Ամփոփելով վերոնշյալը՝ սույն վարույթի շրջանակներում Հանձնաժողովն Արթուր Սուքոյանի կողմից «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջների՝ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու բաղադրիչի մասով օրենքի բովանդակային տեսանկյունից խախտում չի արձանագրում: Ինչ վերաբերում է Արթուր Սուքոյանի կողմից «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջների՝ առևտրային կազմակերպությունում պաշտոն զբաղեցնելու բաղադրիչին, ապա Հանձնաժողովը նշված մասով արձանագրում է, որ առկա է օրենքի բովանդակային խախտում՝ էական համարելով Արթուր Սուքոյանին՝ որպես Ընկերության տնօրենին, փաստացի աշխատած ժամերի դիմաց աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումներ հաշվարկված լինելու հանգամանքը:

Վերոնշյալ փաստերի վերլուծությունը հանգում է նրան, որ Արթուր Սուքոյանի կողմից խախտվել են հանրային պաշտոն զբաղեցնող անձին ներկայացվող անհամատեղելիության պահանջները:

Սույն վարույթի շրջանակներում պարզված փաստական հանգամանքների համադրումից և վերոնշյալ իրավական նորմերի վերլուծությունից Հանձնաժողովն ***եզրահանգում է,*** որ *սույն գործով քննարկված փաստական հանգամանքների շրջանակներում* Արթուր Սուքոյանն իր գործողություններով չի պահպանել Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասով հանրային պաշտոն զբաղեցնող անձի համար սահմանված անհամատեղելիության պահանջները:

Հաշվի առնելով վերոգրյալ հիմնավորումները և ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 24-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 33-րդ հոդվածի 2-րդ մասով՝ Հանձնաժողովը, գնահատելով գործում առկա ապացույցները, բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ՝

ԵԶՐԱԿԱՑՆՈՒՄ Է.

Ազգային ժողովի պատգամավորի օգնական Արթուր Սուքոյանի կողմից խախտվել են հանրային պաշտոնին օրենսդրությամբ ներկայացվող անհամատեղելիության բովանդակային պահանջները:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝

ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՏՅԱՆ